Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 28.12.2023 թվականի «2024 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 334-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2024 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

2024 թվականի համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասի փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է համայնքի գործունեության ընթացքում առաջացած մի շարք ընթացիկ և կապիտալ խնդիրների լուծմամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

2024 թվականի բյուջեի վարչական մասում անհրաժեշտ է ներառել հետևյալ ծախսերը"

05,04,2024 թվականի Մասիս համայնքի ավագանու N 69-Ա որոշմամբ կատարված փոփոխությամբ պայմանավորված անհրաժեշտ է բյուջեի օրենսդիր և գործադիր մարմիններ գործառական դասակարգման աշխատողներին աշխատավարձեր և հավելավճարներ հոդվածի միջոցներն ավելացնել 39 360,0 հազար դրամով:

19.04.2024 թվականի Մասիս համայնքի ավագանու N 100-Ա որոշմամբ պայմանավորված անհրաժեշտ է «Արարատի մարզի Մասիս համայնքի բնակչության հատուկ սպասարկում և համայնքային ենթակառուցվածքների սպասարկում» ՀՈԱԿ-ին հատկացվող սուբսիդիայի չափն ավելացնել 14 610,0 հազար դրամով, որից 5 610,0 հազար դրամն ուղղել աշխատողների աշխատավարձերի հոդվածին, իսկ 9 000,0 հազար դրամն ուղղել վառելիքի ձեռք բերման հոդվածին՝ ՀՈԱԿ-ին տրամադրված թվով 2 տրանսպորտային միջոցով պայմանավորված:

Սպորտային օժանդակություն ստանալու խնդրանքով համայնքապետարան են դիմել Հովտաշատ բնակավայրի 8 մարզիկներ, որոնք մայիսի 31-ից հունիսի 5-ն ընկած ժամանակահատվածում Վրաստանի Բաթումի քաղաքում պետք է մասնակցեն միջազգային մրցաշարի, որի համար անհրաժեշտ է 1 040,0 հազար դրամ:

Մասիս համայնքի ՔԿԳ ՀՈԱԿ-ին հատկացված սուբսիդիայի չափն անհրաժեշտ է ավելացնել 4 420,0 հազար դրամով: Գրադարանին կից մասնաշենքում ապրող արցախահայերի էլ էներգիայի ծախսը կատարվում է գրադարանի էլեկտրոէներգիայի ցանցից, որի հետևանքով տարվա համար ծախսերի նախահաշվով նախատեսված էներգետիկ ծախսերը սպառվել են և մինչև տարեվերջ նշված ծախսերը հոգալու համար անհրաժեշտ կլինի լրացուցիչ 1 200,0 հազար դրամ, Նոր Խարբերդի մշակույթի տան բեմին անհրաժեշտ է նոր վարագույրներ, որի ձեռք բերման համար անհրաժեշտ է

220,0 հազար դրամ, ինչպես նաև համայնքում գործող գրադարանների գրքային ֆոնդը համալրելու համար՝ 3 000,0 հազար դրամ:

Մասիս համայնքում վերջին զանգին նվիրված միջոցառման կազմակերպման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 4 200,0 հազար դրամ:

2024 թվականի բյուջեի ֆոնդային մասում անհրաժեշտ է ներառել հետևյալ ծախսերը"

Վարչական շենքի 5-րդ հարկի արխիվի սենյակի համար անհրաժեշտ է ձեռք բերել դարակաշար, ինչպես նաև գրասենյակային այլ գույք, որի համար անհրաժեշտ է 3 732,4 հազար դրամ:

Համայնքապետարանի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է երկրորդային շուկայից ձեռք բերել երկու ծառայողական ավտոմեքենա, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 12 510,0 հազար դրամ:

Համայնքապետարանի վարչական շենքի հետնամասի այգին գտնվում է անմխիթար վիճակում, և այն բարեկարգելու համար անհրաժեշտ է ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանք, որի համար պետք է բյուջեում նախատեսել 770,0 հազար դրամ:

Մասիս քաղաքի խաչմերուկներում առկա լուսացույցերը հաճախակի են խափանվում, որն էլ խոչընդոտում է անվտանգ երթևեկությանը: Ելնելով անվտանգության կանոններից անհրաժեշտ է ձեռք բերել նոր և ժամանակակից լուսացույցեր,որի համար անհրաժեշտ է 9 818,0 հազար դրամ:

Համայնքի այգիներն ավելի մաքուր պահելու համար անհրաժեշտ է այգիներում և պուրակներում տեղադրել մետաղյա փոքր աղբամաններ, որի համար անհրաժեշտ է 1 950,0 հազար դրամ:

Համայնքում սուբվենցիոն ծրագրերով իրականցված լուսավորության ցանցի կառուցման և բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներն իրականացնելիս առաջացել են լրացուցիչ աշխատանքների կատարման անհրաժեշտություն, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել՝

- Փողոցների լուսավորության ցանցի կառուցման լրացուցիչ աշխատանքների համար՝ 13 485,3 հազար դրամ
- Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման լրացուցիչ աշխատանքների համար՝ 751,1 հազար դրամ

Ռանչպար բնակավայրում մարզասարքերի տեղադրման համար անհրաժեշտ է 1 000,0 հազար դրամ:

Նոր Խարբերդ բնակավայրի մանկապարտեզի շենքում անհրաժեշտ է կատարել ընթացիկ նորոգում, տանիքի ընդլայնում և միջնապատերի կառուցում, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 330,0 հազար դրամ՝ փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքներ ձեռք բերելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	ֆոնդային մասի Ծախսեր	
				Ծախսեր				
1	01	1	1	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	39360,0		
2				Վարչական շենքի արխիվի սենյակի համար գույքի ձեռք բերում	5122		3732,4	
3				Վարչական շենքի հետնամասի այգու բարեկարգման համար նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		700,0	
4				Փորձաքննություն	5134		70,0	
5	01	6	1	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Սուբսիդիա բնակչության հատուկ սպասարկում ՀՈԱԿ-ին	4511	14610,0		
6				Ծառայողական ավտոմեքենաների ձեռք բերում	5121		12510,0	
7				Վարչական սարքավորումներ	5122		-44346,8	
8	04	5	1	**Ճանապարհային տրանսպորտ.** Լուսացույցերի ձեռք բերում	5122		9818,0	
9	05	1	1	**Աղբահանում**"Աղբամանների ձեռք բերում	5122		1950,0	
10	06	1	1	**Բնակարանային շինարարություն.** Մասիս համայնքում բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում /լրացուցիչ մաս/	5113		751,1	
11	06	4	1	**Արտաքին լուսավորություն.** Մասիս համայնքում լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ /լրացուցիչ մաս/	5112		13485,3	
12	08	1	1	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Սպորտային նպաստ	4727	1040,0		
13				Ռանչպար բնակավայրի այգու համար մարզասարքերի ձեռք բերում	5122		1000,0	
14	08	2	1	**Գրադարաններ.** Սուբսիդիա	4511	4420,0		
15	08	2	4	**Այլ մշակութային կազմակերպություններ**"Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ.	4239	4200,0		
16	09	1	1	**Նախադպրոցական կրթություն.** Նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		300,0	
17				փորձաքննություն	5134		30,0	

18	11	1	2	**Պահուստային ֆոնդ**	4891	-63630,0		
						0,0	***0,0***	
				Ընդամենը				

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ